




Ապրիլ, 2025




Բովանդակություն

Բովանդակություն	1
Ֆինանսական դիրք	2
Վարկային պորտֆել և համեմատականներ	3
Տրամադրված վարկերի ծավալը	3
Տրամադրված վարկերի քանակը	3
Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ	5
Վարկերի կառավարում	6
Վերլուծական գործակիցներ	7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2025թ.-ի Ապրիլի 30-ի դրությամբ կազմել են 229.92 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Ապրիլի նկատմամբ աճելով 12.1%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ՝ 0.1%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2025թ.-ի Ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 183.49 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Ապրիլի նկատմամբ աճելով 15.6%-ով, իսկ 2025թ. Մարտի նկատմամբ՝ 1.5% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 82.99 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Ապրիլի նկատմամբ աճելով 13.0%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 0.6%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2024-2025թթ. Ապրիլի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2025թ.-ի Ապրիլ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 14.46 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 23.6%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 9.0%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Ապրիլ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը


- 2025թ.-ի Ապրիլ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 63,043 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 4.9%-ով, իսկ 2024թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 3.6%-ով (Գծ. 3):

- 2025թ.-ի Ապրիլ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 220,004 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2024թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 9.2%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 1.5%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025թ.-ի Ապրիլին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 229 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 834 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2024թ.-ի Ապրիլին կազմել են համապատասխանաբար՝ 192 և 788-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Ապրիլ ամիսներին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2025թ.-ի Ապրիլի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 153 մասնաճյուղ, որը, համեմատած 2024թ.-ի Ապրիլի հետ, աճել է 4-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2025թ.-ի Ապրիլի դրությամբ ունեցել են 427 վարկային մասնագետ, որը, համեմատած 2024թ.-ի Ապրիլի հետ, նվազել է 5-ով:
- 2025թ.-ի Ապրիլին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 33.86 մլն դրամ, նախորդ ամսին՝ 37.92 մլն դրամ, իսկ 2024թ.-ի Ապրիլին այս ցուցանիշը կազմել է ևս 27.08 մլն դրամ (Գծ. 5):
- 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 429.73 մլն դրամ, նախորդ ամսվա 431.46 մլն դրամի և 2024թ.-ի Ապրիլին 367.54 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 3,170 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,867 մլն դրամ և 2024թ.-ի Ապրիլին՝ 1,769 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 79.2%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 69.8%-ով: 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.73%-ը, 2024թ.-ի Ապրիլին ևս կազմել է 1.11% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 3,541 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,666 մլն դրամ և 2024 թ.-ի Ապրիլին՝ 4,353 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 18.6%-ով, իսկ 2025թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 3.4%: 2025թ.-ի Ապրիլի

վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.93%-ը, 2024թ.-ի Ապրիլին՝ 2.74% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 779 մլն դրամ, նախորդ ամիս՝ 680 մլն դրամ և 2024թ.-ի Ապրիլին՝ 555 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2025թ.-ի Ապրիլին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 14.6%-ով, իսկ 2024թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 40.5%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Ապրիլի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.42%-ը, նախորդ ամիս՝ 0.38% և 2024թ.-ի Ապրիլին 0.35% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Ապրիլի 30-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2025թ.-ի Ապրիլի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 79.8%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Ապրիլին կազմել է 77.4% (Գծ. 7):

- Սույն թվականի Ապրիլի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 45.2%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 45%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Ապրիլին կազմել է 46.3% (Գծ. 7):
- 2025թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 36.1%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Ապրիլին կազմել է 35.8% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2025թ.-ի Ապրիլ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.77, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Ապրիլի համար կազմել է 1.79:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ

